

Բագրատ Ս. Ներսիսյան
Բանաս. գիյր. թեկնածու
Կարինե Ժ. Սահակյան

ՅՈՒԹ ՀՈԼՈՎԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՄՆԱՎՈՐԵԼՈՒ ՆՈՐ ՄԵԹՈՎ*

Բանալի բառեր – հարացույց և շարակարգ, համանունություն և բազմիմաստություն, ձևույթ, ընդհանրական քերականական իմաստ, լիաձավալություն, հայցականություն, հատկացականություն, հանգակետայնություն, մեկնակետայնություն, ուղեկցում, ներկայություն:

Առաջին հայացքից կարող է տարօրինակ թվալ, որ երկար ժամանակ լռության մատնված այս հարցը դարձնում ենք քննության առարկա: Սակայն բանն այն է, որ հոլովների հարցում բանավիճողների ճնշող մեծամասնությունը նշել է, որ բանավեճը դեռ ավարտված չէ, քանի որ տարակարծությունները պահպանվում են:

Դրա հետևանքն այն է, որ այսօր էլ բուհերում մասնագետները տարբեր սկզբունքներով են դասավանդում գոյականի հոլովի քերականական կարգը, մինչդեռ բուհն ավարտելուց հետո դպրոցում հայտնվողը պարտավոր է ուսուցանել յոթ հոլովի համակարգը, քանի որ դպրոցում այդպես է ընդունված: Հակադարձ կապի առումով նշելի է, որ բուհ եկած նախկին դպրոցականը անակնկալի է գալիս և իրավացիորեն դժգոհում, որ դպրոցում իրենց ուրիշ բան են սովորեցրել, իսկ հիմա փորձում են համոզել, որ հինգ հոլովի համակարգն է ընդունելի: Ստացվում է, որ հոլովների հարցն արծարծելը բոլորովին էլ ժամանակավրեպ չէ: Պարզ է, որ այստեղ անհնար ու անտեղի է բոլոր տարակարծություններին մեկ առ մեկ անդրադառնալը, բայց հիմնականներին, մասնավորապես ծավալուն, մենագրական վերլուծություններին, համառոտ կանդրադառնանք:

Առ այսօր յոթ հոլովի համակարգի կողմնակիցների վերաբերյալ եղած քննադատությունը հանգում է նրան, որ ելակետային սկզբունքը շարահյուսական է: Մեր մոտեցումն այլ է: Կարող է նույնիսկ անհավանական թվալ, մինչդեռ գրական արևելահայերենում յոթ հոլովի գոյությունը մենք փորձում ենք հիմնավորել՝ հենվելով Է. Աղայանի և Գ. Զահուկյանի տեսա-

*Հոդվածն ընդունվել է տպագրության 20.07.2017:

կետների վրա, բնականաբար անդրադառնալով Մ. Աբեղյանին, քանի որ հինգ հոլովի համակարգի առաջին տեսաբանը մեզանում նա է եղել:

Հոլովների հարցը քննարկելիս ելակետային նշանակություն ունեն ձևային, քերականական կարգի, քերականական համանունության ու բազմիմաստության հասկացություններն ու ըմբռնումները: Սակայն ոչ պակաս կարևոր է, եթե ոչ ամենակարևորը, հարացույցի ու շարակարգի հակադրության խնդիրը: Հոլովման համակարգը սահմանելու հարցում այս հարաբերության մեկնաբանությունն առաջնային է: Հարացույցը ենթադրում է քերականական կարգ ստեղծող ձևայինների ուղղահայաց հակադրություն, իսկ շարակարգը՝ հորիզոնական բառահարաբերություն: Ասվում է, որ առաջինի դեպքում ունենում ենք ձևաբանական կարգեր, երկրորդի դեպքում՝ շարահյուսական:

Այս հարաբերությունը ներկայացնում են ուղղահայաց և հորիզոնական ուղիղների հատումով, ինչը գալիս է մաթեմատիկայից: Հատվող ուղիղները երբեք չեն միանում. դրանով էլ հակադրվում են միմյանց: Այդպես չէ լեզվական երևույթների դեպքում: Այս ուղիղների վրա տեղադրվող միավորները ոչ թե հակադրվում են, այլ՝ համադրվում, քանի որ դրանք պայմանավորված են միմյանցով և պետք է դիտարկվեն ոչ թե հատման կետում, այլ ուղղահայաց և հորիզոնական ուղիղների վրա. հատման կետով դատել չի կարելի, քանի որ դա կնշանակի ելակետային սկզբունքների բախում, որի դեպքում ընդհանուր տեսակետի հանգել հնարավոր չէ: Ուղիղներից ուղղահայացի վրա կան բառաձևեր, հորիզոնականի վրա՝ այդ բառաձևերի հարաբերությունները: Ընդ որում՝ բառաձևեր կազմող երկրորդական բառահարաբերական ձևայինների քերականական իմաստները գալիս են շարակարգից. առանձին վերցրած **-ի**, **-ից**, **-ով** լեզվում չկան, իսկ բառաձևի կազմում սրանց արտահայտած քերականական իմաստները գործածության արդյունք են, մեր փորձից են գալիս:

Կարևոր ենք համարում այստեղ հիշատակել Ա. Խաչատրյանի հետևյալ դատողությունները. «Ինքնին հասկանալի է, որ լեզվի կառուցվածքի յուրաքանչյուր մակարդակի (կամ մասի) քննության առարկան առաջին հերթին տվյալ մակարդակի լեզվական միավորն է: Բայց ինչպես հայտնի է, ստորին մակարդակի լեզվական միավորները հանդես են գալիս նաև վերին մակարդակներում, հետևապես և նրանց լիակատար նկարագրությունը մեկ մակարդակի սահմաններում հնարավոր չէ: Քննության առարկան որոշում է այն շրջանակները, որոնց ներսում պետք է կատարվի տվյալ միավորի ուսումնասիրությունը: Այսպիսով, քննության առարկան լեզվական միավորն է՝ դիտված որոշակի հայեցակետերով, որոշակի սահմաններում: Երբ ասում ենք, թե ձևաբանության առարկան են քերականական կարգերը, թույլ ենք տալիս երկու կարգի անձշտություն. ա) հավասարության նշան ենք դնում քննության առարկա և քննության նպատակ (կամ ուսումնասիրության խնդիրներ) հասկացությունների միջև, քանի որ քերականական կարգերի վերհանումը նպատակ է, վախճանակետ, բ) նեղացնում ենք քերականական կարգ հասկացության էությունը՝ փաստորեն այն նույնացնելով ձևաբանական կարգ տերմինին: Այնինչ, լեզվի մեջ մաքուր ձևաբանական կարգեր գոյություն չունեն, կան միայն ձևաբանական-շա-

րահյուսական, այն է՝ քերականական կարգեր: Պարզ է, որ այսպիսի ըմբռման դեպքում հնարավոր չէ քերականական կարգը ամբողջովին ներկայացնել՝ մնալով ձևաբանության շրջանակներում»¹:

Այս ճշմարիտ մոտեցումը արդյո՞ք որդեգրում են հինգ, վեց և յոթ հոլով ընդունողները: Իհարկե, ո՛չ, քանի որ հինգ և վեց հոլովի կողմնակիցների տեսությունների համաձայն՝ հոլովման համակարգը ձևավորվում է միայն հարացույցում, ուստի հոլովը գուտ ձևաբանական կարգ է, իսկ ըստ յոթ հոլովի տեսության՝ շարահյուսական կարգ:

Մ. Աբեղյանի տեսության համաձայն՝ ձևաբանական սկզբունքով ունենք հինգ հոլով, շարահյուսականով՝ ութ: Ստացվում է, որ գրական արևելահայերենում կա հոլովման երկու համակարգ, և սրա պատճառը հարացույցն ու շարակարգը հակադրելն է, իսկ համադրելու դեպքում ուրիշ արդյունք ենք ունենում: Թեքված գոյականը բառաձև է, որը կազմվում է բառահիմքով և համապատասխան երկրորդական բառահարաբերական ձևայինքով, այսինքն՝ բառաձևն այն բառն է, որն ունի բացի անվանողականից նաև հարաբերողական իմաստ, որը գոյականը, դերանուն գոյականը և գոյական դարձած բառը ձեռք են բերում ձևի և բովանդակության միասնություն կազմող նվազագույն միավորի շնորհիվ: Սա նշանակում է, որ վերջիններս՝ ձևայինքները, միայն իրենց հատուկ հարաբերողական քերականական իմաստներով, պետք է հակադրվեն ու բացառեն միմյանց, որպեսզի ստանանք հարացույց՝ հոլովման համակարգ: Հակառակ դեպքում հարացույցի անդամները կսահմանվեն ապրիորի: Ընդ որում նշված քերականական իմաստները ձևայինքների շարահյուսական կիրառությունների շնորհիվ գոյացած ընդհանրական քերականական իմաստներ են:

«Ձևայինք բառի (բառաձևի) նվազագույն իմաստակիր բաղադրիչն է: ... Բառաձևը, ինչպես բառը և բառակապակցությունը, ունի անվանողական դեր, բայց, ի տարբերություն վերջիններիս, այն ունի նաև հարաբերողական իմաստ, և հենց այս իմաստով է այն կարևորվում լեզվի մեջ: Բառաձևի համար առաջնայինը հարաբերողական և ոչ թե անվանողական իմաստն է: Բառաձևի և բառի հարաբերությունը լիովին տարբերվում է բառի և հնչյունի կամ նախադասության և բառի հարաբերությունից: Եթե վերջին հաշվով բառը կազմված է հնչյուններից, իսկ նախադասությունը՝ բառերից, ապա բառաձևը չի կազմված բառերից. բառաձևը միևնույն բառն է՝ առնված որևէ հարաբերությամբ: Ուրեմն՝ բառաձևը ինքնուրույն մակարդակային միավոր չէ...»²:

Վերջինիս վկայությունն այն է, որ Է. Աղայանը և Գ. Ջահուկյանը բոլոր հոլովների շարահյուսական կիրառությունների հիման վրա են առանձնացնում միայն տվյալ ձևային բնորոշ ընդհանրական քերականական իմաստը, որը հակադարձ կապով նաև վերջինիս շարահյուսական իրացումն է:

Է. Աղայանն առանձնացնում է հետևյալ ընդհանրական քերականական իմաստները. ուղղական – բացարձակ, սեռական – վերաբերական, տրա–

1 Խաչատրյան Ա. Ե., Ձևաբանության առարկայի ավանդական և մակարդակային ըմբռումները, «Բանբեր Երևանի համալսարանի», Եր., 1990, հատ. 1, էջ 88–97:

2 Նույն տեղում, էջ 95:

կան – հանգման, բացառական – ելման, գործիական – իրացման, ներգոյական – սահմանափակման³:

Ըստ Գ. Զահուկյանի՝ ընդհանրական հարաբերողական քերականական իմաստներն են՝ ուղղական–անսահմանափակության, մյուս հոլովները՝ սահմանափակության, որը գրական արևելահայերենում կարելի է բնորոշել երկու հիմնական հատկանիշներով՝ անջատում և հանգում: Հայտնի է, որ այս վերջին երկու հատկանիշների միջոցով հեղինակը բնութագրում է նաև այլ քերականական իմաստներ: Դրանք են. և՛ հանգում, և՛ անջատում մատնանշելու դեպքում ունենում ենք ուղեկցման, իսկ ո՛չ հանգում, ո՛չ անջատում մատնանշելու դեպքում՝ ներակայության, պարունակության իմաստ⁴:

Կան և՛ համընկնող ընդհանրական քերականական իմաստներ (**օր.՝ անսահմանափակության–բացարձակ, հանգման, անջատման–ելման**) և՛ չհամընկնող. միշտ չէ, որ ելակետը նույնն է:

Սկսենք ուղղականից⁵: Տեսանք, որ Գ. Զահուկյանը անսահմանափակության, բացարձակության և լիաձավալության հատկանիշներով բնորոշում է ուղղականի գրո վերջավորությունը և բոլոր թեք հոլովների ձևույթները բնութագրում է սահմանափակությամբ: Հեղինակը դա անում է՝ հենվելով ուղղականի ձևաբանական ու շարահյուսական առանձնահատկությունների վրա: Դրանք են՝ ենթակա, ստորոգելի, կոչական, մի կողմից՝ որպես անկախ անդամներ, մյուս կողմից՝ կախյալ անդամներ՝ իբրև ուղիղ խնդիր, տեղի ու ժամանակի պարագաներ (տես նշվ. աշխ. էջ 199): Է. Աղայանը բառույթի բացարձակ իմաստի ենթիմաստներ է համարում ենթակայի, խնդրի, պարագայի, անվանումի դրսևորումները (տես նշվ. աշխ., էջ 152): Ըստ Է. Աղայանի՝ բառույթը տվյալ կարգի ձևաբանական հարացույցի ելակետային ձևն է գրո վերջավորությամբ: Այստեղից կարելի է եզրակացնել, որ **բացարձակության, անսահմանափակության, լիաձավալության** հատկանիշները նախ ենթադրում են անկախություն, ինքնուրույնություն՝ գրո ձևույթի քերականական իմաստի դրսևորում: Երկրորդ, որ առաջինից է բխում, այս բառերը չեն կարող հանդես գալ կախյալ դերում, քանի որ այդ դեպքում պարզապես անկախ չեն լինի, **անսահմանափակության ու լիաձավալության** հատկանիշներով չեն բնութագրվի և, բնականաբար, որպես բառույթ չեն կարողանա հանդես գալ: Սա նշանակում է, որ բացարձակության, անսահմանափակության, լիաձավալության, անկախության ընդհանրական քերականական հատկանիշների շարահյուսական իրացումները կլինեն ենթական, կոչականը, ստորոգելին, որոշիչը, քանի որ ուղղականը գործողությունից կախման մեջ չէ, կոչականն առհասարակ ուղղականի ամենաանկախ դրսևորումն է, ստորոգելին նույնպես էական բայից կախված չէ, իսկ որոշիչը գերադաս որոշյալի հետ ունի զուտ իմաստային, հատկանիշ մատնանշող առդրային առնչություն:

Այժմ՝ կախյալ անդամների մասին: Մրանք են ուղիղ խնդիրը և պարագաները: Արդյո՞ք ուղղականի հիշատակած կիրառությունները և հայցա-

3 Տես Աղայան Է. Բ., Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1967, էջ 222-229:

4 Տես Զահուկյան Գ. Բ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974, էջ 197:

5 Հոդվածը հղումներով չձանրաբեռնելու նպատակով փակագծերում նշում ենք Գ. Զահուկյանի և Է. Աղայանի նշված աշխատությունների համապատասխան էջերը:

կանը նույնական են, այսինքն՝ վերջին դեպքը նույնպես քերականական հիշյալ ընդհանրական իմաստների դրսևորում է: Թերևս ո՛չ: Բանն այն է, որ հայցականը չի կարող բնութագրվել նշվածներով, քանի որ նախ և առաջ ոչ թե անկախ, այլ կախյալ կիրառություն է, իսկ դա, բնականաբար, գործողության և առարկայի որոշակի հարաբերություն է ենթադրում: Սա հակադրվում է ենթակային. եթե ենթակայի դեպքում ենթադրվում է առարկա, որը գործողություն կատարողն է, ապա ուղիղ խնդիրն այն առարկան, օբյեկտն է, առանց որի ներգործական սեռի բայիմաստով արտահայտված գործողությունն առհասարակ տեղի ունենալ չի կարող: Այսինքն՝ եթե ուղղականը գործողություն կատարող է ենթադրում, ապա հայցականը՝ չկատարող, և այս դեպքում գրո վերջավորությունը բոլորովին էլ անսահմանափակություն, բացարձակություն և այլն չի կարող ենթադրել, այլ միայն սահմանափակություն, քանի որ օբյեկտը իրի կամ որպես իր ընկալվելու դեպքում է հանդես գալիս գրո վերջավորությամբ, որը անձի կամ որպես անձ ընկալվելու դեպքում հավասարազոր է սահմանափակում մատնանշող ձևույթի: Դա պարզ երևում է նաև համապատասխան հարցերից. անձ կամ առարկա ցույց տվող գոյականների հարցն է՝ ուղղականում **ի՞նչ (ո՞վ)** հարցին պատասխանում է միայն որոշյալ ուղղականը՝ **մարդ-ի՞նչ, մարդը -ո՞վ**), մինչդեռ հայցականի հարցերն են՝ անձ կամ որպես անձ ընկալվելու դեպքում՝ **ո՞ւմ**, իսկ իր կամ որպես իր ընկալվելու դեպքում՝ **ի՞նչ**. համապատասխանաբար՝ **մարդու** և **մարդ** կամ **գիրք** (տեսա):

-ի, -ու, -ոջ, -ան և մյուս ձևայիններին տրականի դեպքում Գ. Ջահուկյանը բնորոշ է համարում հանգակետայնությունը, Է. Աղայանը՝ հանգումը, որը նույնն է: Սակայն հայցականին արդյո՞ք բնորոշ է հանգումը: Երբեք: Դիտարկենք հետևյալ օրինակները.**Վաճառողը (ո՞վ) հաց (ի՞նչ) մատուցեց ոմն հաճախորդի (ո՞ւմ): Բժիշկ (ի՞նչ) եկավ: Աթոռ (ի՞նչ) ընկավ: Բժիշկ (ի՞նչ) հրավիրեցին: Բժիշկի (ո՞ւմ) հրավիրեցին: Ոմն ստրուկի (ո՞ւմ) հանձնեցին ոմն տիրոջ (ո՞ւմ): Աթոռ (ի՞նչ) մոտեցնել ինչ-որ դռան (ինչի՞ն):**

Եթե այս նախադասությունների մեջ գրոյով վերջավորվող բոլոր բառերին վերագրենք բացարձակության, անսահմանափակության և մյուս ընդհանրական քերականական իմաստները, իսկ **-ի -ոջ, -ան** ձևայիններին՝ հանգակետայնության, որ ենթադրում է մոտեցում, մատուցում, հանգում, ապա այս առարկաների և համապատասխան գործողությունների միջև գոյություն ունեցող տրամաբանական ու, բնականաբար, նաև քերականական կապը պարզապես անհնար կլինի բացատրել: Պատճառն այն է, որ մի դեպքում գրոն նշանակում է բացարձակություն, անսահմանափակություն, լիաժամկտություն (**վաճառողը մատուցեց, բժիշկ եկավ, աթոռ ընկավ**), քանի որ գործողություն կատարողը անկախ է, ինքնուրույն, մյուս դեպքում, ընդհակառակը, գրոն արդեն անսահմանափակությամբ, բացարձակությամբ ու մյուս համապատասխան հատկանիշներով չի կարող բնութագրվել, քանի որ հավասարազոր է սահմանափակությամբ բնութագրվող **-ի, -ոջ, -ան** ձևայիններին (**բժիշկ հրավիրեցին = աթոռ մոտեցրեց=բժշկի հրավիրեցին=ստրուկի հանձնեցին**): Հրավիրել, մոտեցնել, հանձնել բառերի բայիմաստով արտահայտված գործողություններն ա-

ռանց նշված առարկաների տեղի ունենալ չեն կարող, ուստի անհրաժեշտաբար ընդունում են իրի դեպքում **ի՛նչ**, անձի դեպքում **ո՛ւմ** հարցերը:

Հիշյալ նախադասությունների մեջ գործողություն-առարկա փոխհարաբերությունները ներկայացնելիս անհրաժեշտ է նշել, որ գործողություն-առարկա հարաբերությունը ենթակայի դեպքում ենթադրում է, որ գործողությունը սկսվում է առարկայից. առարկա- գործողություն (**վաճառողը**→**մատուցեց**, **բժիշկը** → **եկավ**, **աթոռը** → **ընկավ**). գործողություն-ուղիղ խնդիր փոխհարաբերության դեպքում կունենանք գործողության երկկողմանի սլաք. կապը փոխադարձ է, քանի որ ներգործական սեռի բայի մաստով արտահայտված գործողությունն առանց օբյեկտի պարզապես տեղի ունենալ չի կարող (**մատուցեց**↔ **հաց**, **հրավիրեցին** ↔ **բժիշկ**, **հրավիրեցին** ↔ **բժշկի**, **հանձնեցին** ↔ **ստրուկի**, **մոտեցրել է** ↔ **աթոռ**): Իսկ հանգակետայնության դեպքում լինում է գործողություն → առարկա հարաբերություն (**մատուցեց**→ **հաճախորդի**, **հանձնեցին**→**տիրոջ**, **մոտեցրին**→**դռան**): Գործողություն-առարկա փոխհարաբերության մեր նշած տարբերությունը է. Աղայանը հետևյալ կերպ է մեկնաբանում. «... ուղղականի և տրականի կիրառությունը ուղիղ խնդրի պաշտոնում հանգեցնում է նրանց հոլովական իմաստների հակադրության չեզոքացման, բայց մյուս կողմից առաջ է բերում նոր քերականական իմաստների՝ անձի և իրի առման հակադրություն: Սրանով իսկ ստեղծվում է **երկու հոլովների լրացուցիչ բաշխում** (**дополнительная дистрибуция**). մեկը՝ ուղղականը, հանդես է գալիս իրի առման դիրքում, իսկ տրականը՝ անձի առման դիրքում: Նրանք իրենց հոլովական իմաստներով այդ դիրքներում չեն հակադրվում իրար, բայց հակադրություն են ստեղծում շարահյուսական կարգի երկու միավորների՝ անձի և իրի քերականական իմաստների միջև՝ դառնալով այդ կարգի արտահայտման միջոցը: Ըստ այդմ, անձի և իրի առումը, որպես շարահյուսական կարգ, հատուկ է ուղիղ խնդրին և գործ չունի ձևաբանական մակարդակի հետ, իսկ սա նշանակում է, թե նա չի կարող հինք հանդիսանալ հայցական հոլովի գոյությունը հաստատելու համար» (նշվ. աշխ., էջ 208-209):

Նախ՝ անհնար է հասկանալ, թե ինչպես կարող է առաջանալ բացարձակության և հանգման քերականական իմաստների չեզոքացում, եթե, իհարկե, ուղիղ խնդիրը հանգում է ցույց տալիս: Երկրորդ՝ անձի և իրի հակադրության միջոցով ինչպե՞ս կարող է առաջանալ «երկու հոլովական ձևերի լրացուցիչ բաշխում»՝ առանց հոլովական իմաստների հակադրության, ինչպե՞ս կարող է, է. Աղայանի խոսքով ասած, ստեղծվել զուտ շարահյուսական կարգ, որը գործ չունենա ձևաբանական մակարդակի հետ: Հայցական հոլովի ուղիղ ձևին՝ գրո վերջավորությանը, հնարավոր չէ վերագրել ինքնուրույնություն, քանի որ նրա տարբերակը **-ի**, **-վա**, **-ոջ** և մյուս ձևայիններն են, որոնք տրականի դեպքում հանգման քերականական իմաստ ունեն: Վերջիններս այս դեպքում հանգման քերականական իմաստ չեն կարող ունենալ, քանի որ գրո ձևային այն չունի: Զուտ շարահյուսական իմաստ հոլովական բառաձևերի դեպքում չի կարող լինել. սրանք հարաբերողական իմաստ ունեցող ձևայիններով են կազմված, ուստի նաև ձևաբանական կարգեր են առաջացնում, այսինքն՝ ինչպես մյուս բառա-

ձևերը, միաժամանակ և՛ ձևաբանական, և՛ շարահյուսական կարգ են ներկայացնում:

Թերևս սա է պատճառը, որ Գ. Ջահուկյանը սահմանում է դասի քերականական կարգ: Ճիշտ է, հեղինակը դա անում է՝ առանձնացնելով թվի և հոլովի ցուցիչներ, բայց այս դեպքում մեզ հետաքրքրում է երկրորդը: Բանն այն է, որ իրանիշ և անձնանիշ անունների դասը Գ. Ջահուկյանը սահմանում է **գրո և ան-ք/ց, են-ք/ց, ոն-ք/ց, ա, ոջ, այ/ո** և այլն ձևայինների բաշխման միջոցով (նշվ. աշխ., էջ 209), որը հնարավոր է միայն հայցական հոլովում, իսկ վերջինս այս դեպքում հարացույցում անփոփոխակ է դառնում: Կարծում ենք՝ այս մասին է վկայում նաև այն, որ Գ. Ջահուկյանը դրանք անվանում է դասահոլովանիշ թեքություններ (էջ 189):

Է. Աղայանը գրում է. «...հոլովական իմաստները հարաբերությունների վերացարկված ու ընդհանուր տրամաբանական կատեգորիաներ են արտահայտում, որոնք դժվար է մատչելի ու պարզ սահմանումներով ներկայացնել» (նշվ. աշխ., էջ 193): Իհարկե, այդպես է: Բայց, ինչպես տեսնում ենք, Է. Աղայանին և Գ. Ջահուկյանին հաջողվել է սահմանել ուղղականի ընդհանրական քերականական իմաստը: Իսկ ի՞նչ կարելի է ասել հայցականի մասին:

Վերլուծություններից երևաց, որ այն Գ. Ջահուկյանի առանձնացրած դասի քերականական կարգը ձևավորող հոլովն է, որը, հասկանալի է, և՛ ձևաբանական, և՛ շարահյուսական կարգ է իրենից ներկայացնում, քանի որ ուղղակիորեն կապվում է ներգործական սեռի բայիմաստի հետ: Այս իսկ պատճառով հայցականի քերականական իմաստը իրենից՝ դասային իմաստից, չի բխում, որ ընդամենը անձի կամ իրի ընկալում է ենթադրում, ուստի վերջիններիս քերականական իմաստը հնարավոր է բխեցնել միայն բայիմաստից: Ճիշտ է, այս դեպքում, մյուսների հետ համեմատած, սկզբունքը խախտվում է: Բայց այլ կերպ հնարավոր չէ, քանի որ հայցականում գրո և մյուս ձևայինները վերոհիշյալ պատճառով ինքնուրույն քերականական իմաստ չեն կարող ունենալ: Սակայն քանի որ, ի վերջո, անհրաժեշտ է գործողության և առարկայի իրական, տրամաբանական հարաբերությունը քերականորեն բնութագրել, ուստի, կարծում ենք, պետք է օգտագործել այն, ինչը վաղուց արել են մեր քերականները. այս հոլովի համար ընդհանրական քերականական իմաստ համարել հայցականությունը, քանի որ ներգործական սեռի բայն է հայցում դա:

Անհրաժեշտ ենք համարում ուշադրություն հրավիրել նաև հետևյալ կարևորագույն հանգամանքին: Ջարգացած քերականական համակարգ ունեցող լեզուների նախադասությունները ստորաբաժանվում են ըստ երկու հիմնական կառուցատիպի՝ նոմինատիվ և էրգատիվ: Առաջինի դեպքում ենթական դրվում է ուղիղ հոլովով՝ ուղղականով, ուղիղ խնդիրը՝ թեք, իսկ երկրորդի դեպքում՝ հակառակը. ենթական դրվում է թեք հոլովով, ուղիղ խնդիրը՝ ուղղականով: Սա համընդհանուր ճանաչում և ընդունելություն ունեցող տիպաբանական բնութագիր է: Այն է՝ ենթական և ուղիղ խնդիրը չեն կարող հանդես գալ ուղղական հոլովով: Հայոց լեզուն չի կարող բացառություն լինել:

Ինչ վերաբերում է սեռականին, ապա, կարծում ենք, Է. Աղայանի հիմ-

նավորումները միանգամայն համոզիչ են: Կավելացնենք միայն, որ սեռական ինքնություն հողով չհամարել պարզապես չի կարելի, քանի որ միակ բառաձևն է, որի ձևայինները մատնանշում են երկու առարկաների փոխհարաբերություն՝ ի տարբերություն մյուսների, որոնք առարկա - գործողություն կամ գործողություն - առարկա հարաբերություն են ենթադրում: Այս առումով է. Աղայանի առաջարկած **վերագրման** ընդհանրական իմաստը գուցե այնքան բնութագրական չէ (նշվ. աշխ., էջ 226):

Շատ հետաքրքրական, բայց և միևնույն ժամանակ ինչ-որ տեղ անհասկանալի է Գ. Զահուկյանի մոտեցումը: Բանն այն է, որ Գ. Զահուկյանը միանգամայն իրավացիորեն սեռականի ձևայինների համար սահմանում է հատկացականությունը, սակայն զարմանալիորեն այն համարում է հայերենի համար ոչ բնութագրական և, որ ամենաանհասկանալին է, մտցնում է հանգակետայնության մեջ (տե՛ս նշվ. աշխ., էջ 201):

Տարօրինակ է, թե ինչպես կարող է հատկացականությունը, որ ենթադրում է պատկանելություն և պատկանյալ, առարկա-առարկա փոխհարաբերություն, համարվել հանգակետայնության դրսևորումներից մեկը, որը գործողություն-առարկա փոխհարաբերություն է ենթադրում: Արդյոք հնարավոր է ասել, որ **ուսանողի** գիրքը և մոտեցա **ուսանողին**, **իմ** գիրքը և մոտեցավ **ինձ** նույն հարաբերությունն է, այսինքն՝ **-ի**-ն ունի նույն մեկ՝ հանգակետայնության քերականական իմաստը: Անհնար է: Սեռական հոլովի ընդհանրական քերականական իմաստն իրոք հատկացականությունն է, բայց վերջինս սեռականի համար բնութագրական չհամարելով հանդերձ՝ հոլովական անփոփոխականների և փոփոխականների աղյուսակը կազմելիս Գ. Զահուկյանը սեռականի տարբերիչ հատկանիշ է համարում անդիմագուգորդելիությունը՝ դիմավոր բայի հետ չգուգորդվելը, որը ոչ թե տվյալ բառաձևի ընդհանրական քերականական իմաստն է, այլ դրա հետևանքը. պատկանյալը թույլ չի տալիս, որ հատկացականության քերականական իմաստի հետ գուգորդվի գործողություն ցույց տվող դիմավոր բայ: Ուստի կարծում ենք, որ նշված աղյուսակում սեռականի տարբերակիչ հատկանիշը հենց հատկացականությունն է:

Ասացինք, որ բացառականի **մեկնակետայնությունը** և **ելման** քերականական իմաստները բնութագրական են և համընկնում են: Կուզենայինք ավելացնել հետևյալը: Է. Աղայանը բերում է՝ «**Ծառերի կատարները շարժվում են քամուց**» օրինակը և ասում, որ այս նախադասության մեջ **քամուց** կարելի է դիտել և՛ որպես պատճառի պարագա, և՛ որպես ներգործող խնդիր, որի փոխակերպումը կլինի՝ «**Քամին շարժում է ծառերի կատարները**» (նշվ. աշխ., էջ 171-172): Բայց ինչո՞ւ պիտի այսպես փոխակերպենք, ինչն է պատճառը: Եթե մեկն ասում է, որ **կատարները շարժվում են**, ուրեմն հենց այդ էլ ի նկատի ունի, այսինքն՝ այն, որ **կատարները շարժվում են**. վերջինս չեզոք սեռի բայ է: Որ **կատարները շարժվում են**, այս դեպքում քամին է պատճառը, ուրիշ դեպքում այլ պատճառ կարող է լինել (օր.՝ մեկը կարող է շարժել): Եթե խոսողն այսպես է ներկայացնում իրականությունը (**կատարները շարժվում են**), այսպես էլ պետք է ընկալել և ոչ թե համարել, որ փաստը ներկայացնողն ուզում էր ասել, թե իբր **քամին է շարժում կատարները**. Եթե ուզենար դա ասել, այդպես էլ կասեր,

մանավանդ որ հայերենի համար բնորոշը նոմինատիվ կառուցվածքն է: Ասածից հետևում է, որ **շարժելու** գործողություն կատարողը **կատարներն են**, իսկ պատճառն այս դեպքում այն է, որ, ինչպես թերևս արձանագրում է խոսողը, **քամի կա**: Այստեղ և՛ տրամաբանական, և՛ քերականական ենթական **կատարներն են**:

Գործիականի համար է. Աղայանը սահմանում է **իրացման**, իսկ Գ. Ջահուկյանը՝ **ուղեկցային** ընդհանրական քերականական իմաստ: Կարծում ենք՝ «**ուղեկցային**» բառն ավելի բնութագրական է, քանի որ, իրոք, և՛ խնդրային, և՛ պարագայական բոլոր կիրառություններում դա դրսևորվում է (տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 126, աղյուսակ 19): Սակայն Գ. Ջահուկյանը գործիականին վերագրում է նաև **լիաձավալության** քերականական իմաստը: Գիտենք, որ **լիաձավալության, անսահմանափակության, բացարձակության** իմաստները հատուկ են զրո ձևույթին, իսկ թեք հոլովների ձևույթներին հատուկ է սահմանափակության իմաստը: Նշանակում է, որ գործիականին հիշյալ իմաստները Գ. Ջահուկյանը վերագրում է՝ ելնելով ներգործող խնդրի կիրառությունից, որը իրական ենթակա է համարվում: Մինչդեռ արդյո՞ք այսպես կոչված կրավորական կառույցի նախադասություններում իրական ենթակա չկա: **Դաշտը ծածկվեց կանաչով: Երեխան ծածկվեց վերմակով:** Այս նախադասությունների գործիականով կիրառությունները ինչո՞ւ պետք է անպայման ներգործող խնդիր լինեն: Եթե **դաշտը ծածկվում է, երեխան ծածկվում է** դեպքերում, ինչպես **կատարները շարժվում են** դեպքում համարում ենք, որ գործ ունենք չեզոք սեռի բայերի հետ, ինչը, կարծում ենք, այդպես էլ կա, ապա **կանաչով** և **վերմակով** դեպքերում էլ ունենում ենք միջոցի անուղղակի խնդիր:

Կարող ենք եզրակացնել, որ վերոնշյալ երկու պատճառներով գործիականը չի կարող բնութագրվել լիաձավալությամբ:

Ներգոյականի համար էլ, կարծում ենք, բնորոշ է Գ. Ջահուկյանի առանձնացրած **ներակայության** իմաստը:

Արդյունքներն ամփոփենք աղյուսակով:

Տարբերակիչ հատկանիշներ	Հոլովական միավորներ (անփոփոխականներ)						
	Ուղղական	Հայցական	Սեռական	Տրական	Բացառական	Գործիական	Ներգոյական
Լիաձավալություն (բացարձակություն, անսահմանափակություն)	+	-	-	-	-	-	-
Հայցականություն	-	+	-	-	-	-	-
Հատկացականություն	-	-	+	-	-	-	-
Հանգակետայնություն (հանգում)	-	-	-	+	-	-	-
Մեկնակետայնություն (ելման)	-	-	-	-	+	-	-

Ուղեկցում	-	-	-	-	-	+	-
Ներակայություն	-	-	-	-	-	-	+

Ինչպես տեսնում ենք, հոլովների թիվը համապատասխանում է ընդհանրական քերականական իմաստների թվին. յուրաքանչյուրին համապատասխանում է մեկ քերականական իմաստ:

Դա ակնհայտ է դառնում նաև համապատասխան հարցերի միջոցով. ուղղ. **ինչ**, հայց. **ինչ, ու՛մ**, սեռ. **ինչի՛, ու՛մ**, տր. **ինչի՛, ինչի՛ն, ու՛մ**, բաց. **ինչից, ումից**, գործ. **ինչո՞վ, ումո՞վ**, ներգ. **ո՞րտեղ**: Սրանք այն հիմնական հարցերն են, որոնցով սահմանվում են ընդհանրական քերականական իմաստները: Այլ բան է, որ բառաձևերը տարբեր շարահյուսական կիրառությունների դեպքում, որոնք այս քերականական իմաստների իրացումներն են, կարող են պատասխանել նաև ածանցյալ հարցերի, օրինակ՝ գործիականի հետևյալ կիրառություններում. ուղեկցման անուղղակի խնդիր՝ **«Բանվորներով գնաց»՝ ու՛մ հետ**, անցման տեղի պարագա՝ **«քաղաքով անցավ»՝ ո՞րտեղով**, միջոցի չափի պարագա՝ **«հինգ կոպեկով գնաց»՝ ինչքանով**, տարածության չափի պարագա՝ **«կիլոմետրերով գնում էր»՝ ինչքան**, ձևի պարագա՝ **«Անդրով ասաց»՝ ինչպես**, հիմնուքի պարագա՝ **«կարգադրությամբ գործուղվեց»՝ ինչ հիման վրա**, **ինչ հիմնությով**, **ինչ հիմամբ**, նպատակի պարագա՝ **«գործով գնաց»՝ ինչ նպատակով**, **ինչո՞ւ**, ժամանակի չափի պարագա՝ **«մեկ ժամով գնաց»՝ ինչքան ժամանակով** և այլն⁶:

Հոլովման հարացույցի որոշ անդամներ բնութագրվում են համանությունամբ և ոչ թե բազմիմաստությամբ, քանի որ, ինչպես փորձեցինք շարադրանքում համոզել, դրանց արտահայտած քերականական իմաստները մեկ բառաձևում անհամատեղելի են՝ ուղղականը և իրի հայցականը, ինչպես նաև սեռականը, տրականը ու անձի առման հայցականը:

Այսպիսով, Է. Աղայանի և Գ. Զահուկյանի առանձնացրած ընդհանրական քերականական իմաստների վերլուծությունը մեզ հանգեցնում է այն եզրակացության, որ գրական արևելահայերենում կա յոթ հոլով:

Բագրատ Ս. Ներսիսյան – ուսումնասիրում է գրական արևելահայերենի տեսության հարցերը: Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է նաև վրացերենի և ռուսերենի զուգադրական-տիպաբանական հետազոտումը:

Կարինե Ժ. Սահակյան – զբաղվում է գրական արևելահայերենի տեսական և գործնական քննությամբ: Ռուսախոս ուսանողներին հայերեն ուսուցանելու բուհական գործնական ձեռնարկների հեղինակ է:

6 Զահուկյան Գ. Բ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր, 1974, էջ 426, աղյուսակ 19:

Summary

NEW METHOD OF SUBSTANTIATION OF THE THEORY OF SEVEN CASES

Bagrat S. Nersisyan
Karine Zh. Sahakyan

Key words – syntagma, paradigm, abstract grammatical meaning, morpheme, grammatical synonymy, homonymy, absoluteness, accusativity, possessiveness, being dative, initiality, accompanying.

In this article, we attempt to single out seven cases in the literary Eastern Armenian language on the basis of the abstracted grammatical meanings of the cases, which are expressed by the corresponding morphemes. We believe that the paradigm and the syntagma need to be compared and not opposed, as a result of which it turns out that the case wordform is not only a morphological but also a syntactic category.

In our opinion, the accusative is a separate, independent case, since it cannot be characterized by the grammatical meaning of unlimitedness, absoluteness, which are inherent only in the nominative case. The accusative case of inanimate objects depends on the semantics of the transitive verb and is therefore characterized by accusativity. Nominative and accusative cases of the inanimate objects are grammatical homonyms.

The genitive and the dative are also independent cases: the genitive is characterized by being possessive, and the dative – by being dative. These are incompatible grammatical meanings. Therefore, despite the fact that these cases are formed by the same morphemes, they are not polysemantic wordforms, but homonymous different wordforms. Using the abstracted grammatical meanings inherent in the corresponding case forms put forward by E. Aghayan and G. Jahukyan, we come to the conclusion that each case is characterized by its inherent grammatical meaning. These are: nominative – unlimitedness, absoluteness, accusative – being accusative, genitive – possessiveness, dative – being dative, initial case – being initial, instrumental case – accompanying, local case – being at.

НОВЫЙ МЕТОД ОБОСНОВАНИЯ ТЕОРИИ СЕМИ ПАДЕЖЕЙ

Баграт С. Нерсисян
Карине Ж. Саакян

Ключевые слова – синтагма, парадигма, абстрагированное грамматическое значение, морфема, грамматическая синонимия, омонимия, абсолютность, винительность, посессивность, дательность, исходность, сопроводительность, нахождение.

В данной статье мы пытаемся выделить семь падежей в литературном восточноармянском языке на основе абстрагированных грамматических значений падежей, которые выражаются соответствующими морфемами. Мы считаем, что парадигму и синтагму необходимо сопоставлять, а не противопоставлять, в результате чего выясняется, что падежная словоформа представляет собой не только морфологическую, но и синтаксическую категорию.

По нашему мнению, винительный является отдельным, самостоятельным падежом, так как не может характеризоваться грамматическим значением неограниченности, абсолютности, которые присущи только именительному падежу. Винительный падеж неодушевленных предметов зависит от семантики переходного глагола и потому характеризуется винительностью. Именительный и винительный неодушевленных предметов являются грамматическими омонимами.

Родительный и дательный также являются самостоятельными падежами: для родительного падежа характерна посессивность, для дательного – дательность. Это несовместимые грамматические значения. Поэтому несмотря на то, что эти падежи формируются одними и теми же морфемами, это не полисемичные словоформы, а омонимичные разные словоформы. Используя присущие соответствующим падежным формам абстрагированные грамматические значения, выдвинутые Э. Агаяном и Г. Джаукяном, мы приходим к выводу, что каждый падеж характеризуется присущим только ему грамматическим значением. Это: именительный – неограниченность, абсолютность, полнообъемность, винительный – винительность, родительный – посессивность, дательный – дательность, исходный падеж – исходность, творительный – сопроводительность, местный падеж – нахождение.

ՀԵՅՉԱՐՄԵՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ, 2017
Թ. (ԺԵ) ԴՐԱՐԻ, ԹԻՎ 3 (59), ԽԱՄԻՆ-ԱԽՐԻՄԻՆԻԵՐ, 2017
ՀՀՎ ԽԱՄԻՆԱՅԻՐԱԿԱՆ ԽԱՆՐԻՆ